Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-232[63]-11.04.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-518-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 40-րդ հոդվածի 1-ին մասում «հետաքննության մարմինների» բառերը փոխարինել «օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմինների» բառերով:

Հոդված 2. Օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասում «Նախաքննության և հետաքննության մարմինների» բառերը փոխարինել «Նախաքննություն և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմինների» բառերով:

Հոդված 3. Օրենքի 45.6-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետում «հանված կամ մարված» բառերը փոխարինել «մարված կամ վերացված» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-199-Ն օրենքների ուժի մեջ մտնելու օրը: